

ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՂԳԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՐԱՍՊՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Ազգային ծանր ողբերգությունները՝ շարդերը, ցեղասպանությունը, բռնակալների դաժան լուծը, բավական ծանր ազդեցություն են թողնում սերունդների ազգագիտակցության վրա և չփակվող վերքի մասն աճընդհատ մորմոքալով՝ արթնանում են աշխարհ եկող ճոր սերունդների հետ՝ պահանջելով բացատրություն և հատուցում՝:

Էթնոհոգեբանական հետազոտությունների արդյունքները հիմք են տալիս եզրակացնելու, որ եղեռնագործություններ տեսած ժողովուրդների հետագա սերունդների ընդվզումները կատարվածի նկատմամբ միայն քաղաքական գնահատականի պահանջով չեն կարող բացատրվել, ունեն լուրջ հոգեբանական պատճառներ, որոնք անհրաժեշտ է գիտականորեն վերլուծել՝:

Աճխտելի փաստ է, որ իրենց ազատության համար պայքարող ժողովուրդները դրսևորում են գիտակցված հայրենասիրություն, դիմադրողականություն, հերոսական ոգի, ազատասիրություն, գործունեության նպատակասլացություն և մի շարք այլ վեհ գծեր, որոնք, զուգակցվելով քաղաքական իրողություններին և հասարակական կյանքում կատարվող փոփոխություններին, ձեռք են բերում ազգային հոգեբանությունը ձևավորող գործառույթ¹, որն էլ հնարավոր է դարձնում ճիշտ գնահատել ժողովրդի հոգեբանական վերքերը և հաղթահարել ցավն ու տառապանքը: Նշանակում է՝ ազգի ինքնաճանաչման խնդրում գիտական մոտեցում ցուցաբերելը կարող է ծառայել ժողովրդի հոգեբանական ինքնամաքրմանը, հայ նհիքի ազատագրման և պաշտպանության խնդիրները ինքնուրույնաբար և վստահորեն լուծելու ոգու և կարողության ձևավորմանը:

«Պիտ որոնենք,- գրում է Գարեգին Նըժ-

դեհը,- փնտրենք, գտնենք մեր դժբախտությունների իրական պատճառները, ճանաչենք մեր իսկական վերքերը, ախտորոշենք մեր ժողովրդի հոգին, որից հետո միայն խոսք կարող է լինել բուժումի մասին»²:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ցեղասպանության փաստը շարունակում է ծանր ներգործություն ունենալ հայ պատանիների արդի սերնդի հոգեբանության վրա:

«Ցավը ազգային հատկանիշ է դարձել և պիտի ունենանք այնքան, մինչև մեղավորը չպատժվի, այլապես հոգեբանական վերքերը բաց կմնան»,- ճշում է պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը՝ ընգծելով տվյալ հատկանիշի կայուն դրսևորումները ամբողջ հայ ժողովրդի հոգում:

Հայ պատանիների ազգագիտակցության դրսևորումների առանձնահատկությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց համար կարևոր խնդիր է եղեռնի հետ կապված հարցերի իմաստավորումը կամ պարզապես հասկանալը:

XX դարի սկզբներին մեծ տերությունների քաղաքականության անբարոյականությունը և շահախնդրությունը հայ պատանեկությանը վիրավորում, հուզում և որոշակի գործողությունների են մղում, որոնցով և պայմանավորված է որոշ մասի կողմից վրեժխնդրության արդարացման ձգտումը:

Այսպես օրինակ, ինչո՞ւ էին հնարավոր դառնում մարդկության դեմ գործվող ոճիրները, մի՞թե դրանք պայմանավորված էին միայն տնտեսական կամ այլ շահերով, կամ ինչո՞ւ տիրող և նվաճվող ժողովուրդների միջև մի դեպքում հաստատվում է համակրանք, մշակութային խոր փոխներգործություն, իսկ մեկ այլ դեպքում, ինչպես հայերի ու թուրքերի, գերմանացիների և հրեա-

¹ Տե՛ս Յ. Գ. Պողոսյան, Ներածություն հայ հոգեբանության, Կախիբե, 1965, էջ 167-175:

² Տե՛ս Ա. Ա. Նայչաջյան, Էթնիկական հոգեբանություն, Եր., 2001, էջ 102-105:

³ Տե՛ս Շ. Վ. Լурье, Историческая этнология, М., 1998, էջ 349-363, А. А. Налчаджян, Этнопсихологическая самозащита и агрессия, Ер., 2000, էջ 342-347:

⁴ Գ. Նժդեհ, Հավատամք, Եր., 1991, էջ 44:

ճերի դեպքում, ունեցավ ծանր ողբերգական ընթացք:

Հայոց Մեծ եղեռնը և Հայ դատի խնդիրը հայ պատանեկության ազգագիտակցության արդիական ցավոտ խնդիրներից է: Պատանիները գրեթե միշտ ճշում են, որ Հայ դատը իրենց համար հոգեբանական ծանր բեռ է: Սակայն անկախ պետականության հաստատումն առաջ բերեց և՛ հայրենասիրական զգացմունքների բռնկում, և՛ նորովի գնահատեց Հայ դատի հեռանկարը:

Արցախյան ազատամարտը որոշ չափով շտկեց պատանեկության հոգեբանությունը. միակ ճշմարիտ ճանապարհը թըշնամու դեմ վճռականորեն, հանուն ազատության բացեփաց մարտնչելն է: Պատանիները պատմությունից վերցնում են այն դասը, որ դիմադրողը փրկվում է թեկուզ զոհերի գնով, և զոհերն էլ անմաստ չեն ազատության ճանապարհին:

Այս առումով կարևոր դեր ունի հայ վրիժառուների «Նեմեսիս» խմբի սխրանքների պատմությունը: Հայ պատանիների բարոյական ոգին մեծապես բարձրանում է այն փաստով, որ Սողոմոն Թեհլերյանը ոչ միայն կատարեց վրիժառության հերոսական արարք, այլև նրան հաջողվեց իրագործել անսխալադեպ մի խնդիր՝ Հայոց եղեռնի հարցը տանել եվրոպական դատարան և նույնիսկ վրիժառության ճանապարհով եղեռնի կազմակերպիչներին՝ հայ ժողովրդի դահիճներին, պատժելը արդարացնել:

Ծառան Նաթալիի՝ Թեհլերյանին տված հրահանգը՝ «Կփշռես զանկը թիվ մեկ ազգասպանին և չես փորձիր փախչիլ, ոտքդ կդնես սատակին վրա և կսպասես մինչև ոստիկանները կգան ու կձերբակալեն քեզ»,¹ օգնում է պատանիներին հասկանալ, որ հայ վրիժառուներն իրագործում էին արդարությունը, որ նրանք կանանց և երեխաների թիկունքում չէին թաքցվում, մարդաշատ տեղերում ուռմբեր չէին պայթեցնում, այլ ոչնչացնում էին մարդկության թշնամիներին, որոնք իրենց իսկ երկրում դատապարտված էին մահվան հայերի դեմ գործած ոճիրների համար:

Աստիճանաբար հայ պատանեկության գիտակցության մեջ խորանում է այն միտքը, որ կան թուրքերի վրա ազդելու քաղաքակիրթ եղանակներ: Ըստ պատանիների կարծիքով, այս դիրքորոշման առավելությունն այն է, որ համընկնում է միջազ-

գային հանրության պահանջներին, չի արտահայտում կույր վրեժխնդրություն և ընձեռում է քաղաքակիրթ աշխարհի հետ համագործակցության եզրեր:

Հարցն այն է, որ որոնելով սեփական հոգու ախտորոշումը՝ հայ պատանիները մտածում են, որ եթե որոշ երջանիկ ժողովուրդներ իրենց պատմությանը կարող են նայել որպես անցած փուլի, անպահանջ ժողովուրդն իր գոյատևման ճանապարհին բախվում է չլուծված խնդիրների: Նա ցանկանում է վերանայել պատմությունը, որը վնասել է իր արմատները:

Հաճախ պատանիները կարծում են, որ ազգագիտակցությունը պետք է ուղղված լինի միայն նվիրումին՝ ազգի համար տառապանք կրելուն: Մեր պատանեկության գիտակցության մեջ այնքան էլ հրստակ չեն անձնական, զոհաբերություն չպահանջող երջանկության պատկերացումները: Կարող է թվալ, թե դա հայի ազգային առանձնահատկությունն է, որ իբր այնքան տառապանք է տեսել մեր ժողովուրդը՝ պատերազմներ, ջարդեր, ստրկություն և այլն, որ ինչ-որ չափով դարձել է վատատես: Կարծում ենք, որ այդ հայացքը միակողմանի է և պարզունակ, բանն այն է, որ այստեղ մենք գործ ունենք պատանեկան մտածողության տիպիկ առանձնահատկության հետ: Պատանեկությունն իրականում փոքր-ինչ հակված է ինքնատառապանքի, սակայն այն պետք է դիտել ոչ թե որպես հիվանդագին դրսևորում, այլ լիովին օրինաչափ և բնական գործընթաց: Քանի որ պատանեկությունը, ձգտելով ինքնահաստատման, ուզում է փորձել նաև ցավը հաղթահարելու բերկրանքը: Ուրեմն ոչ թե ցավն է ինքնանպատակ, հաճելի, այլ ցավին դիմանալու, ինքնատիրապետման մեջ համոզվելու, հաղթանակի բերկրանքը ապրելու ձգտումն է մոտիվացված: Եթե ընդունենք, որ պատանեկությունը խիզախություն և համարձակության տարիք է, պարզ կդառնա ցավի նկատմամբ նման վերաբերմունքի բնական լինելը:

Ազգային ցավի անկեղծ ապրումը հոգեբանական պլանում իմաստավորվում է ազգի համար պատասխանատվություն կրելու, իր ժողովրդի և քաղաքակրթության ներկայացուցիչն ու նվիրյալը լինելու պատանու դիրքորոշմամբ: Սակայն ցեղասպանության հարցը բոլոր հայ պատանիներ-

¹ Ծառան Նաթալի, Թուրքերը և մենք, Եր., 1992, էջ 12:

րի կողմից նույն ձևով չի ըմբռնվում և ապրրվում: Կան նաև խորը անտարբերության, պարզունակ ըմբռնման ոչ եզակի դեպքեր, որոնք պայմանավորված են ոչ այնքան սոցիալական ծանր վիճակով, որքան պատանեկության վրա ապագային գաղափարախոսության ազդեցությամբ:

Կրոնի ոլորտում ազգագիտակցության դրսևորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պատանեկության առավել կրթված, գիտակից մասը եկեղեցին դիտում է որպես ազգային միասնության խորհրդանիշ, ազգային համախմբման միջոց:

Սակայն բոլորովին այլ է վիճակը աղանդներին հարող պատանիների շրջանում: Այս խմբի պատանիները, կտրված լինելով ազգային գաղափարախոսությունից, վերածվում են հոգեբանորեն թույլ զանգվածի և ավելի շատ բևեռվում են կրոնաբարոյական և հոգեբանական հոգեվիճակային խնդիրներին՝ գլխավորը համարելով իրենց հոգեվիճակից եկող ազդակները, երբեմն նույնիսկ էքստազի և հմայման պահանջումները:

Բավական դժվար է որևէ ազգային հարց քննարկել աղանդավոր պատանիներից շատերի հետ, նրանք, եթե նույնիսկ արժևորում են ազգայինը, ապա իրենց աղանդի, իրենց իմացած «քրիստոնեական արժեքների» տեսանկյունից: Աղանդներում ընդգրկված ոչ միայն պատանիների, այլև ավելի մեծերի մեջ ըստ էության խաթարված է ազգային պատկանելության զգացումը:

Համեմատելով շեղվող վարքի և աղանդավոր պատանիների ազգագիտակցությունը՝ կարելի է պնդել, որ ազգայինն ավելի արթուն և արժևորված է առաջինների՝ սովորականից շեղվող վարք ունեցող պատանիների միջավայրում:

Եղեռնի վերաբերյալ հարցերին աղանդավոր պատանիները տվեցին հետևյալ պատասխանները:

«Աստված այդպես էր կամեցել», «Հայերը մեղավոր էին Աստծո առաջ և կրեցին իրենց պատիժը», «Հայերը պատժվեցին զենք կրելու համար», «Հայերը երանելի ժողովուրդ են, որ եղեռն են տեսել: Ջոհվելով անապատներում՝ նրանք կրկնեցին Քրիստոսի՝ Աստծո որդու տառապանքները», «Հայերը և հրեաները ընտրյալ ժողովուրդներ են, այդ իսկ պատճառով էլ նրանք կրգնան դրախտ և կարծանանան հավերժական երջանկության»: Ինչպես տեսնում ենք, աղանդավոր պատանիներից շատերը գրեթե ոչ մի քաղաքական գնահատական չեն

տալիս եղեռնին, նրանց մեջ շատ թույլ են այդ մասին գիտելիքները: Առավել մտահոգիչը նրանց անտարբերությունն է փաստերի նկատմամբ: Թերևս դա կարելի է վերագրել նրանց մտավոր զարգացման մակարդակին. իրոք, վերջիններս մտավոր զարգացման մակարդակով զգալիորեն հետ են մնում իրենց հասակակիցներից: Նույնիսկ ուսանող աղանդավորականները մեկուսացված են իրենց միջավայրից և իրենց հետո են պահում ոչ միայն ընդհանրապես հասարակական գործերից, այլև ազգային պարզ խնդիրներից:

Աղանդների ծայրահեղ բացասական ազդեցությունը պատանեկության ազգագիտակցության վրա ակնհայտ է հատկապես աղետի գոտում: Սակայն դա նույնպես պետք է վերագրել ոչ թե աղետի, այլ այս տարածքում աղանդների հատկապես ուժեղ գաղափարական ազդեցությանը, որի համար աղետի իրադրությունը պարզապես նպաստավոր հող ստեղծեց: Բանն այն է, որ զանազան արտասահմանյան օգնությունները մարդասիրական քողի տակ ակտիվորեն տարածում են իրենց հակաազգային, ըստ էության, ուղղակի հակահայկական գաղափարախոսությունը:

Ազգային գիտակցության դեֆորմացիան բնորոշ է նաև հայ կաթոլիկ պատանեկությանը: Ինչպես նշում է հայ մեծ գրող Բաֆֆին, նրանք իրենց հաճախ հայ չեն կոչել՝ «մենք ֆրանկ ենք»: Դրանով իսկ նրանք կարծեք թե գիտակցաբար ցանկանում են տարբերվել հայերից: Դրա պատճառը կրոնադավանաբանական գաղափարական պայքարը և կենցաղային սովորույթների տարբերությունն է: Հոգու խորքում նրանք իրենց միշտ էլ հայ են համարել: Դա պարզ ու հստակ երևաց վերջին ժամանակաշրջանում՝ ար...այան հերոսամարտի ազդեցության լակ հայ կաթոլիկ պատանիների մեջ տեղի ունեցավ ազգային գիտակցության զարթոնք, և նրանք նետվեցին արցախյան գոյամարտի մեջ, հերոսացան, իրենց իսկ խոսքերով ասած՝ «վրեժ լուծելով իրենց ազգային թմրածության համար»:

Հայոց եղեռնի հարցում հայ կաթոլիկ պատանեկությունն այսօր ապրում է խոր ցավ, հայրենասիրություն, «պատմությունն ուղղելու» ձգտում, պատրաստ է ամեն ինչով զորավիզ լինել հայ դատի խնդրին, որը նույնպես յուրովի խոսում է աղանդների ապագայնության և վտանգավորության մասին: